Արտիստը

հեղինակ՝ Շիրվանզադե

(կրճատումներով)

Հինգ ամիս էր ընդամենը՝ Օդեսայում էի, չորրորդ անգամ փոխեցի սենյակս: Փոքր ի շատե մեծ քաղաքում բնակվող մենակեցի համար մի առանձին հաճույք է ստեպ—ստեպ կացարան փոխելը: Անցնելով մի թաղից մյուսը, կարծում ես մի երկրից մյուսն անցար: Նոր հարևանություն, նոր միջավայր, երբեմն այլ կենցաղով ու ոգով:

Այս անգամ պիտի բնակվեի աղմկալից փողոցներից մինում, հինգ հարկանի մի տան երրորդ հարկում: Տանտիրուհիս իտալուհի էր, գեր, առողջ, ամրակազմ մի այրի, մոտ հիսուն տարեկան: Նրա ամուսինը եղել է իտալական օպերայի հուշարար. շատ վաղուց հայրենիքից տեղափոխված Ռուսաստան: Մեռնելով՝ կնոջ և միակ դստեր համար թողել է իբրև ժառանգություն հինգ նոտանի մի մեծ կապոց և իտալացի արտիստների ծանոթությունը: Այրին ապրելու ուրիշ միջոց չունենալով, պարապում էր սենյակները վարձու տալով:

Հենց առաջին օրը ծանոթացա հարևաններիս հետ: Այդ ինձ համար նոր և բավական հետաքրքրական շրջան էր: Նա բաղկացած էր մեծ մասամբ իտալացիներից: Կար և մի ռուս ուսանող ու մի հրեուհի ատամնաբույժ, բավական գեղեցիկ, թեև ոչ այնքան թարմ: Կենտրոնը կազմում էր տանտիրուհու դուստրը՝ շիկահեր, փղոսկրի պես փայլուն, մաքուր ատամներով և գեղեցիկ աչքերով քսան տարեկան Լուիզան: Նա երգում էր, ուներ զորեղ և անուշ ձայն, պատրաստվում էր բեմին նվիրվելու: Գիտեր նվագել դաշնամուր, երաժշտության դասեր էր տալիս, փող ժողովում, որ գնա Իտալիա՝ ձայնը մշակելու:

Առաջին օրն անծանոթ շրջապատում զգացի սովորական անհարմարություն, երկրորդ օրն ընտելացա, իսկ մի շաբաթ անց՝ բավական բարեկամացա բոլորի հետ: Մենք ճաշում էինք միևնույն սենյակում, միաժամանակ, միևնույն սեղանի քով: Երկու ժամից սկսած մինչև երեկոյան չորս—հինգ ժամը ծիծաղ, երգ, նվագում, պար ու սրախոսություններ խառնվում էին միմյանց և ջերմացնում տարբեր ազգերի ու դավանությունների պատկանող մարդկանց բարեկամական մթնոլորտը:

Մի օր ճաշից հետո Լուիզան նստեց դաշնամուրի քով և սկսեց նվագել ինչ—որ վալս: Բասո—կոնտատո Չելլինին գրկեց կոնտրալտո Լուկրեցիա Կաֆարելլին ու սկսեց պարել: Բարձրացավ ընդհանուր ծիծաղ, որովհետև իրավ, որ, այդ մի զվարժալի զույգ էր: Չելլինին խիստ նիհար էր և շատ բարձրահասակ: Լուկրեցիա Կաֆարելլին ընդհակառակն, խիստ գեր ր և կարճահասակ: Լուիզան նվագելով հանդերձ՝ գեղեցիկ գլուխը ձգել էր ետ և անզուսպ քրքջում էր, լցնելով սենյակը իր անուշ ձայնի հյութալի հնչյուններով:

Զվարճության տաք միջոցին դռների մեջ նկատվեց ինձ համար մի անծանոթ կերպարանք: Ոչ ոք առաջին պահ չնկատեց նրան, բացի ինձանից, որ նստած էի դռների մոտ: Անծանոթը հենց առաջին վայրկյանից գրավեց ուշադրությունս: Ես դիտեցի նրան: Մոտ 16—17 տարեկան մի պատանի էր, նիհար, գունատ դեմքով, կուրծքը փոքր—ինչ ներս ընկած: Հագած էր մուգ կապտագույն գոտևոր, կարճ բաճկոն, որի կուրծքը զարդարված էր ասրյա խաչաձև ծոպերով և